
**ՆԵՐԱԿԱ ԻՄԱՍՏԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԿԱՆԽԵՆԹԱԴՐՈՒՅԹԻ ԵՎ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ**

ԶԱԲԱՐՅԱՆ Վ. Ա.

Վերլուծության ենթակա ցանկացած խոսույթում արտակա և ներակա իմաստների տարբերակման անհրաժեշտությունը ժամանակակից լեզվաբանության, ինչպես նաև հասարակական գիտությունների գլխավոր հիմնախնդիրներից է դարձել: Յուրաքանչյուր բառային միավորի նշանակությունը, ըստ Ֆ. Կիֆերի, բաղկացած է երկու մասից՝ բառի իրական և կանխենթադրական նշանակությունից¹:

Ուսումնասիրելով տեղեկություններ արտահայտելու երևույթը՝ Դ. Մենզոնոն և Կ. Կերբրատ-Օրեկիոնին կազմել են իմաստների դասակարգման պարզ սխեմա, ըստ որի, իմաստները ընդհանուր առմամբ լինում են երկու տեսակի՝ արտակա (posés) և ներակա (implicites = inférences) : Վերջիններս իրենց հերթին դասակարգվում են կանխենթադրությունների (présupposés) և կանխավարկածների կամ ենթադրյալների (sous-entendus)²:

Կանխավարկածի և կանխենթադրության միջև տարբերակման չափանիշը, ըստ Օ. Դյուկրոյի, կանխենթադրության յուրահատուկ դրսևորումն է, երբ ասույթը, որում այն շրջանառվում է, ենթակա է որոշակի շարահյուսական փոփոխությունների, ինչպիսիք են ժխտումը կամ հարցադրումը: Դյուկրոն «Ֆրանսիական ասույթների իմաստաբանական նկարագրությունը և կանխենթադրության հասկացությունը» հոդվածում ցույց է տալիս, որ ասույթի կանխենթադրությունները հաստատվում են նաև տվյալ ասույթի ժխտմամբ կամ դրա՝ հարցականի վերափոխմամբ: Կարող ենք բերել Il a cessé de fumer (նա թողել է ծխելը) օրինակը, որը ցանկացած իմաստաշարահյուսական փոփոխության դեպքում կփաստեր մեր այն կանխենթադրությունը, որ Il fumait auparavant (նա նախկինում ծխում էր): Կանխենթադրությունը չէր ժխտվի նաև, եթե տվյալ ասույթը շարունակություն ունենար, եթե գործ ունենայինք արտակայորեն արտահայտված իմաստային բովանդակության հետ՝ Il a cessé de fumer parce qu'on lui a interdit³ (Նա թողել է ծխելը, որովհետև նրան արգելել են):

Կանխենթադրությունը ընդհանուր առմամբ արտահայտում է խոսողի դիրքորոշումը, նրա վերաբերմունքը ասվածի նկատմամբ

¹ **Кифер Ф.** О пресуппозициях (Новое в зарубежной лингвистике, вып. 8, М., 1978, с. 345-356).

² **Kerbrat-Orecchioni C.** L'implicite, Paris, 1986, p. 7; **Maingueneau D.** Introduction à la linguistique française, Paris, 2001.

³ **Ducrot O.** La description sémantique des énoncés français et la notion de presupposition (L'Homme, N 1, 1968).

(Ա. Աքմաջյան⁴, Ժ. Վերշուրեն⁵): Կանխենթադրության երևույթը սերտ կապի մեջ է ընդհանուր շարահյուսական կառույցների հետ, ահա թե ինչու ենք այն դիտարկում լեզվաբանական բաղադրիչում, որտեղ պետք է նկարագրված լինեին վերջինիս կառուցվածքային առանձնահատկությունների իմաստային արժեքը: Նույն փաստարկը չի գործում կանխավարկածների դեպքում, որոնց կապը շարահյուսության հետ դժվարությամբ է արտահայտվում:

Կանխավարկածները հաճախ հավելյալ իմաստ են ներկայացնում: Կանխավարկածը, ինչպես կեսկատակ-կեպուրջ նշում են որոշ գիտնականներ, թույլ է տալիս ինչ-որ բան առաջ տանել՝ առանց այն ասելու՝ այն ասելով: Կանխենթադրության դեպքում իրավիճակն այլ է. այն սերտորեն կապված է ասության բառացի իմաստի հետ. *Il continue à fumer-il fumait auparavant-il fume actuellement* (Նա շարունակում է ծխել – նա նախկինում ծխում էր – ներկայումս նա ծխում է): Նշենք, սակայն, որ կանխենթադրությամբ նույն ձևով չի պատկանում ասության, ինչ կերպ՝ արտակայորեն արտահայտված իմաստը:

Ըստ Լ. Բրուտյանի՝ կանխենթադրությամբ նախադասության ենթադրյալ իմաստաբանական բաղկացուցիչներից է, որը նախադասության մեջ արտահայտված չէ բավականաչափ արտակա կերպով⁶: Կանխենթադրությամբ դիտարկվում է որպես ակնհայտ մի բան, որպես անվիճարկելի շրջանակ, որում տեղի է ունենում զրույցը՝ որպես խոսության դաշտի միավոր: Այն ժխտման ենթակա չէ: Եթե արտակայորեն արտահայտված իմաստն այն է, ինչ ես փաստում եմ որպես խոսող, կանխավարկածն այն է, ինչ ես թողնում եմ խոսակցիս եզրակացությանը, ապա կանխենթադրությամբ այն է, ինչ ես ներկայացնում եմ ընդհանուր երկխոսության երկու մասնակիցների միջև՝ որպես համագործակցության առարկա: Կանխենթադրությամբ «մենք»-ին է պատկանում, այսինքն՝ ես էլ, դու էլ ընդունում ենք դա, արտակայորեն արտահայտված իմաստը «ես» է պահանջում, իսկ կանխավարկածը թողնված է «քեզ»: Կանխավարկածն ինքնին բացակայում է ասությունում, այն ի հայտ է գալիս միայն այն ժամանակ, երբ խոսակցը մտորում է տվյալ ասության շուրջ:

Իսկ ահա կանխենթադրությամբ և հատկապես արտակայորեն արտահայտված իմաստը (*posé*) հանդես են գալիս որպես ասության ներհատուկ միավորներ (չնայած որ կանխենթադրության դեպքում գործ ունենք անցյալի գիտելիքի վերհիշման հետ): Դրանք դրսևորվում են միևնույն ժամանակ, ինչ որ ասությամբ և ստանձնում են ասությամբ ընտրողի պատասխանատվությունը (սակայն կանխենթադրության պարագայում խոսողը փորձում է այդ պատասխանատվությունը ստանձնել լսողի հետ՝ իր ասածը թաքցնելով համընդհանուր համոզմունքի (*croyance*) տակ): Դյուկրոն կարծում է, որ կանխենթադրությունները պետք է ուսումնասիրվեն լեզվաբանական բաղադրիչի

⁴ Akmajian A. *Linguistics. An Introduction to Language and Communication*. Forth Edition, 1995.

⁵ Verschuere J. *Understanding Pragmatics*, New York, 1999.

⁶ Բրուտյան Լ., *Ներակայության տեսության հիմունքները*, Ե., 2002, էջ 16-18:

շրջանակում, որը կոդիտարկի ասույթն ինքնին, առանց դրա գործածության (occurrence) պայմանները հաշվի առնելու, այնինչ կանխավարկածները պետք է քննության առնվեն հոետորական բաղադրիչի կողմից, որը հաշվի է առնում ասության հանգամանքները, որտեղ կարևոր է վկայակոչել գործող անձանց որևէ զգացմունք, որևէ պահանջ⁷:

Կանխավարկածն առանձնահատուկ արժեք է ձեռք բերում՝ հակադրվելով բառացի իմաստին, որից այն բացարկվում է: Իսկ լսողի համար ինչպե՞ս հնարավոր կդառնա բացահայտել այն: Պետք է տրամաբանորեն ճիշտ որևէ դատողություն կառուցել: Երբ, օրինակ, ասում ենք *L'enfant veut sortir, emmène-le au zoo* (Երեխան ուզում է դուրս գալ, նրան կենդանաբանական այգի տար), ներակայորեն առաջ ենք բերում այն կանխավարկածները, որ կենդանաբանական այգին կհետաքրքրի երեխային, այն բաց է, այնտեղ դժվար չէ հասնել և այլն. բնական է, որ մեր կողմից բխեցված կանխավարկածները ներդաշնակ են ասույթի բառացի իմաստի հետ, որն է. «Երեխան ուզում է ինչ-որ տեղ գնալ և պետք է նրան ժամանցի որևէ վայր տանել»: Նմանատիպ վերլուծություններ անելիս պարտադիր է, սակայն, հիշել, որ կանխավարկածը ենթակա է ժխտման, այսինքն՝ այգին կարող է փակ լինել վերանորոգման պատճառով, երեխային ընդհանրապես չգրավի ժամանցի այդ տարբերակը և այլն: Ասվածն ապացուցում է Դյուկրոյի այն մտքի ճշմարտացիությունը, որ կանխավարկածի պատասխանատվությունը խոսողը թողնում է լսողին, այսինքն՝ ինչքան էլ պնդենք, որ այս կամ այն կանխավարկածը ներդաշնակ է բառացի իմաստին, այն, հանգամանքների բերումով ժխտման ենթարկվելով, կարող է իմաստային խզում առաջացնել երկու իմաստների միջև (այստեղ արժե հիշել, որ կանխավարկածը վերաբերում է ապագայի պլանին, և լսողի կողմից խոսողի միտքը ըմբռնելու ժամանակ ասույթի բառացի իմաստի ամեն մի փոխակերպում ինքնին հնարավոր է դառնում):

Դյուկրոն գրում է, որ կանխավարկածների հիմքում այնպիսի խոսութային գործողություն է, որը համատեղելի է տրամաբանության կանոնների հետ: Իսկ այդ գործողությունն էլ իր հերթին հիմնվում է ասույթի վրա, ավելի ճիշտ՝ դրա ասության, այն փաստի, որ ասույթը կգործածվի տվյալ պահին, տվյալ հանգամանքներում: Դյուկրոն հետաքրքիր բանաձև է տալիս, որով, ըստ հեղինակի՝ բացահայտվում է լսողի դատողությունը. «Եթե ինչ-որ մեկը ճիշտ է համարում ինձ ասել դա, ապա, անկասկած, նա այդպես է մտածում» (դա է նրա միտքը): Լսողի համար հաճախ կանխավարկածի վերհանման տեղիք է տալիս նվազասույթի օգտագործումը: Օրինակ՝ *Il ne refuse pas de goûter de bons plats* (Նա չի հրաժարվում համեղ կերակուրներ ճաշակելուց). սովորաբար լսողը նման օրինակներում նվազասույթ է տեսնում և փորձում է այն ներկայացնել ավելի ուժգին ասույթով (օրինակ՝ նա շատակեր է, անքաղաքավարի է

⁷ Ducrot O. *Le dire et le dit*, Les Editions de Minuit, Paris, 1984, p. 21.

և այլն): Այս համատեքստում կարևոր է ուշադրություն դարձնել այն բանին, թե տվյալ տեքստը կամ ասույթը հեղինակը (խոսողը) ինչ մտադրությամբ է մատուցում. արդյո՞ք նա, հաճախ ամենատարբեր ոճական հնարներ կիրառելով, փորձում է ազդել լսողի կողմից հեղինակին անհրաժեշտ կանխավարկածներ ձևավորելու վրա, պետք է պարզել նաև, թե ո՞վ է լսողը, արդյո՞ք նա կանխատրամադրվածություն ունի՞ լսելու X ասույթը, և այն մեկնաբանելու որպես Y, և, վերջապես, կա մեկ այլ մոտեցում, համաձայն որի, հեղինակին ընդհանրապես չի հետաքրքրում, թե լսողը ինչ կանխավարկածներ կկառուցի իր առաջարկած ասույթի հիման վրա: Այսինքն, իրականում համոզվում ենք, որ լսողի դատողությունները ինքնաբերաբար առաջնահերթորեն հիմնվում են ասության փաստի (օրինակ՝ ինչու է կիրառվել տվյալ նվագասույթը, որոնք էին հեղինակի շարժառիթները, ինչու ասույթը հնչեց հենց տվյալ իրավիճակում և այլն) և ոչ թե արտահայտված բովանդակության վրա:

Լսողի համար օգտակար են նաև իրեն ուղղված ասույթներում առկա ճշտումները, առանցքային փաստերը, որոնք հաճախ կառուցված են լինում տնտեսման սկզբունքից ելնելով: Ինչպես՝ *Henri soutient la politique socialiste* (Անրիին սատարում է սոցիալիստական քաղաքականությանը) ասույթից լսողը ներակայորեն եզրակացնում է, որ խոսողը այլ քաղաքական ուժերի գործունեությունը չի գնահատում կամ թերագնահատում է: Դրանում մեզ օգնում է *socialiste* բառը, որովհետև եթե Անրիին սրտամոտ լինեք բոլոր կուսակցությունների քաղաքականությունը, ապա *socialiste* բառի գործածումը կդառնար անիմաստ: Նույն կերպ՝ եթե ես հաճոյախոսեմ կնոջն՝ ասելով «Դուք այսօր լավ տեսք ունեք» ես, հնարավոր է՝ վիրավորեմ նրան, որովհետև, եթե նա միշտ լավ տեսք ունի, ապա ինչու եմ ես շեշտում «այսօր» բառը:

Դյուկրոն կարծում է, որ ֆրանսերենի *si*-ն (եթե-ն) տարբերվում է ներակայման տրամաբանական հարաբերությունից, և դրա առաջնային գործառնություն է՝ լսողին խնդրել որևէ վարկած արտահայտել, որոշակի հավանականության շրջանակում հայտնվել, որի ներսում կարելի է ներկայացնել գլխավոր նախադասության մեջ արտահայտված պնդումը (*affirmation*): Եթե գործածում ենք *Si le prof ne vient pas, les étudiants s'en iront* (Եթե դասախոսը չգա, ուսանողները կհեռանան) ասույթը, ապա պարզ ըմբռնում ենք, որ արվող հնարավոր դատողությունները վերաբերում են ասության ակտին և կարող են պատասխանատու լինել կանխավարկածի համար (այսինքն՝ մեկնելու ասությունը ստորադասվում է գալու ասությանը և որպես ուսանողի հեռանալու անհրաժեշտ պայման կարող է դիտվել դասախոսի չգալու հանգամանքը. իսկ եթե ընդունենք, որ ուսանողներն ամեն դեպքում հեռանալու են, ապա հարց կծագի տվյալ ասույթի ստեղծման անիմաստության և աննպատակահարմարության մասին):

Իրավիճակն այլ է, երբ խոսքը վերաբերում է կանխենթադրությին: Եթե ասում ենք *Pierre a donné un peu de vin à Jacques* (Պիեռը Ժակին մի քիչ գինի է տվել), առաջ է գալիս այն կանխենթադրությունը,

որ Պիեռը Ժակին գինի է տվել: Այսինքն՝ ասություն առկա սո peu de (մի քիչ) կառույցը չի հերքում բերված կանխենթադրույթի առկայությունը: Կանխենթադրույթի բացահայտումը կապված չէ խոսող անձանց անհատական դիտարկման և վերլուծության հետ, այլ առկա է լեզվում: Պարզ է, որ կանխենթադրույթը, լեզվաբանական բաղադրիչի արդյունքը լինելով, կապվում է հիմնական շարահյուսական երևույթների հետ: Ի տարբերություն կանխենթադրույթի՝ կանխավարկածը բխում է հաղորդագրության ասության հանգամանքների մասին հասցեատիրոջ մտորումից, այն միևնույն ժամանակ հաշվի է առնում ասույթի իմաստը և դրա գործածության պայմանները և դրանց հանդեպ կիրառում է տրամաբանական ու հոգեբանական ընդհանուր օրենքներ:

Ինչպես արդեն հպանցիկորեն նշեցինք, կանխենթադրույթների բացահայտումը նախորդում է կանխավարկածի վերհանմանը: Դյուկրոն կարծում է, որ կանխենթադրվող իմաստային միավորների իմացությունը անհրաժեշտ նախապայման է կանխավարկածների վերհանման համար: Մենք կարող ենք կանխավարկած համարել լսողի կողմից ասույթի հիման վրա արված եզրակացությանը տրվող եզրակացությունը: Պարզ ասած՝ իմաստային նկարագրության լեզվաբանական բաղադրիչի հիման վրա կառուցել հոետորական բաղադրիչը, «Եթե նա գար, ես կգնայի» պարզունակ նախադասությունից նախ դուրս բերել «Նա չի եկել» կանխենթադրույթը, այնուհետև վերջինից տրամաբանորեն բխեցնել «Ես չեմ գնացել» կանխավարկածը: Նշենք, սակայն, որ ասություն առկա կանխենթադրույթները կարող են չըմբռնվել որպես այդպիսիք և չառանձնացվել արտակայորեն արտահայտված իմաստից, ինչը չի խանգարի կանխավարկածների բացահայտմանը հոետորական բաղադրիչի օգնությամբ: Դյուկրոն երկու հետաքրքիր օրինակ է բերում. Nous avons eu peu de chance և Nous avons eu un peu de chance (Մենք քիչ հաջողություն ունեցանք և Մենք մի քիչ հաջողություն ունեցանք): Այստեղ հեղինակը մեկնաբանություն է տալիս՝ նվազասույթի գործած ազդեցության տեսանկյունից, այսինքն՝ peu de chance = pas de chance “ un peu de chance=beaucoup de chance (քիչ հաջողություն = հաջողություն չկա և մի քիչ հաջողություն = շատ հաջողություն): Ընդունելով Դյուկրոյի առաջ քաշած կանխավարկածների ճշմարտացիությունը՝ այնուամենայնիվ, հարցը կդիտարկենք հաջող/անհաջող գնահատման չափանիշից ելնելով՝ կարևոր համարելով ասույթի նպատակադրությամբ ակնկալվող արդյունքը⁸: Ըստ այդմ՝ Nous avons eu peu de chance ասույթից ներակայորեն եզրակացնում ենք, որ մենք ձախողվել ենք, գործն ավարտին չենք հասցրել և այլն, իսկ ահա Nous avons eu un peu de chance ասույթը ենթադրում է, որ ամեն դեպքում բախտը մեզ ժպտացել է, ու մենք իրականացրել ենք մեր

⁸ Золян С. Язык политического конфликта: логико-семантический анализ, 2000 //http://e-lib.rss.cz/diglib/pdf/105.pdf

նպատակը, ինչը կարողանում ենք հասկանալ սո peu de կառույցի օգնությամբ:

Ընդհանուր առմամբ, լեզվաբանական տեսության մեջ տարբերվում են կանխենթադրույթը՝ որպես լեզվի երևույթ և կանխավարկածը՝ որպես խոսքի երևույթ: Ասույթների բովանդակության բաշխումը արտակայորեն տրված իմաստային միավորների և ներակա ենթադրվող իմաստային միավորների միջև բանավիճային գործառույթ է ենթադրում, ինչն արդեն ոչ թե ասույթի, այլ խոսույթի երևույթ է: Կանխենթադրությունը սահմանելիս մենք առաջ ենք բերում այն հնարավորությունը, որ այն տալիս է՝ լսողին մեկուսացնելու իր կողմից չընտրված մտավոր տիեզերքում: Կանխենթադրույթը, ի տարբերություն կանխավարկածի, ճարտասանության երևույթ չէ, կապված է ասության հետ, բայց եթե այն առկա է լեզվում, պետք է եզրակացնել, որ լեզուն, անկախ իր գործածությունից, ներկայանում է որպես սուբյեկտիվությունների բախման և բանավեճի վայր:

Վերադառնալով Դյուկրոյի առաջ քաշած Pierre a cessé de fumer (Պիեռը թողել է ծխելը) օրինակին, որի արտակայորեն արտահայտված իմաստին և կանխենթադրույթին արդեն անդրադարձել ենք, կարող ենք նաև ի հայտ բերել զանազան կանխավարկածներ՝ կախված նրանից, թե քննարկվող ասույթը ինչ համատեքստում է օգտագործվում և ում է ուղղված: Այն նույնիսկ կարող է արտահայտվել որպես հակաձխախոտային ակցիա՝ հետևյալ կանխավարկածով. «Պիեռին դա հաջողվել է, դու էլ կարող ես դա անել»:

Ընդհանրապես կանխենթադրույթը ի հայտ բերելու վերաբերյալ երկու դրույթ է առաջ քաշվում. ա) նախադասության նշանակությունը կարող է իր ասույթների իմաստում այս կամ այն կանխենթադրույթի գոյություն ենթադրել, բ) բոլոր կանխենթադրույթները, որոնք ի հայտ են գալիս ասույթի իմաստում, արդեն կանխատեսված են նախադասության նշանակության մեջ:

Վերանայելով իր տեսությունը՝ Դյուկրոն նշում է, որ կանխենթադրույթն իրոք անցյալ է, բայց հարց է, թե որ ներկայի հետ հարաբերակցությամբ: Իսկ ահա կանխավարկածը, դիտարկելի լինելով որոշ ասույթներում, այնուամենայնիվ, նշութավորված չէ նախադասության մեջ: Որպես կանոն, կանխավարկածը ստեղծվում է ի պատասխան այնպիսի հարցերի, ինչպիսիք են «Ինչու է խոսողն ասել այն, ինչ ասել էս, «ինչն է հնարավոր դարձրել նրա խոսքը» և այլն:

Կանխենթադրույթ-կանխավարկած հակադրությունը հանգեցնում է երկու իմաստային մակարդակների՝ նշանակության (նախադասություն) և իմաստի (ասույթ) տարբերակման: Կանխենթադրույթը և կանխավարկածը հակադրվում են նրանով, որ մեկնաբանության միևնույն պահին չեն ծագում: Դյուկրոն եզրակացնում է, որ կանխենթադրույթն ամենից առաջ պատկանում է նախադասությանը. այն հաղորդվում է նախադասությունից ասույթ այնքանով, որքանով վերջինս բավարարում է նախադասության գործածության պայմանները:

Դյուկրոն վերստին անդրադառնում է նաև կանխենթադրույթի առանձնացման երկու հիմնական չափանիշներին՝ ժխտմանը և հարցադրմանը: Այսինքն՝ պնդման կանխենթադրույթը պահպանվում է, երբ որ այդ պնդումը վերափոխում ենք ժխտականի կամ հարցականի. Est-ce que Pierre a cessé de fumer? -Pierre fumait autrefois (Արդյոք Պիեռը թողե՞լ է ծխելը – Նախկինում Պիեռը ծխում էր):

Դյուկրոն կանխենթադրությունը բնորոշել է որպես խոսքային, ավելի ճիշտ՝ իլոկուտիվ (խոսողական-կատարողական) ակտ, ինչպիսիք են հարցման, հրամանի, պնդման ակտերը: Իսկ կանխավարկածը քննարկվում է նույն պլանում, ինչ պերլոկուտիվ (խոսողական-ներգործական) ակտը և վերագրվում է ասության հանգամանքներին: Դյուկրոն միաժամանակ հնարավոր է համարում, որ կանխենթադրությունը արտահայտվի միայն ասության մակարդակում, և այն նույնիսկ կարող է արտահայտվել կանխավարկածի տեսքով: Իսկ ինչու ոչ, կարծում է Դյուկրոն, եթե կան կանխավարկածային խընդրանքներ (օրինակ՝ Voulez-vous entrer dans la salle? – Մտե՛ք լսարան), կլինեն նաև կանխավարկածային կանխենթադրություններ: Դյուկրոն նշում է, որ կանխավարկածի հասկացությունը խոսքային առանձին ակտ չի նշանակում, այն վերաբերում է կողավորման կամ ապակողավորման առանձնահատուկ գործընթացի, որի ժամանակ ի հայտ են գալիս իլոկուտիվ ակտերի տարբեր տեսակներ՝ մասնավորապես կանխենթադրությունը (ծխելը թողնելու փաստ-եներգիայով լեցուն լինելը – ծխելը թողնելը՝ առողջության ապացույց): Ըստ Դյուկրոյի՝ կանխենթադրույթը ասության իմաստի բաղկացուցիչ մաս է, իսկ կանխավարկածը վերաբերում է այն ձևին, որով այդ իմաստը պետք է վերծանվի՝ ապակողավորվի հասցեատիրոջ կողմից:

Ամփոփելով կարող ենք նշել, որ խոսողն իր խոսքն ընդհանուր առմամբ ներկայացնում է որպես մի հանելուկ՝ առեղծված, որը հասցեատերը պետք է բացահայտի: Դյուկրոյի կարծիքով՝ կանխավարկածի դեպքում տեղի է ունենում հետևյալ գործընթացը՝ որևէ բան ասելու համար մեր ասելիքը ասել ենք տալիս այլ մարդու: Այսինքն՝ խոսողը տալիս է որոշակի աղբյուրներ (ըստ այս կամ այն մարդու կամ կազմակերպության), նշում է ինչ-որ միջանկյալ բառեր (ուրեմն, փաստորեն և այլն). դրանով ոչ միայն խուսափում է ասածի պատասխանատվությունից՝ այն գցելով հասցեատիրոջ (լսողի) վրա, այլև որոշ առումով վերջինիս հնարավորություն է տալիս քննարկվող ասույթը մեկնաբանել կանխավարկածներ հայտնելով, առանց պատասխանատվություն ստանձնելու՝ ընդհանուր դատողությունների օգնությամբ:

ВЫЯВЛЕНИЕ ИМПЛИЦИТНОГО СМЫСЛА НА УРОВНЯХ ПРЕСУППОЗИЦИИ И ПОДРАЗУМЕВАЕМОГО

ЗАКАРЯН В. А.

Резюме

В общей лингвистике различаются два уровня имплицитного смысла – предполагаемый (пресуппозиция) и подразумеваемый.

Представители французской лингвистической школы определяют пресуппозицию как языковое явление, а подразумеваемое – как речевое. Пресуппозиция не подлежит отрицанию, ибо она соотносится с прошлым и связана со смыслом и синтаксической структурой высказывания. Подразумеваемое же подлежит отрицанию, внося некий дополнительный смысл в высказывание, и вытекает из представлений адресата о факторах, которыми обусловлено высказывание. Последнее являет собой риторическое высказывание, не маркированное в предложении.

Пресуппозиция и подразумеваемое взаимосвязаны, при этом пресуппозиция является составной частью смысла высказывания, а подразумеваемое – это способ “расшифровки” смысла высказывания адресатом.